իգական։ Գիւղի դիրքը մասամբ լեռնային է և մասամբ դաշտային և աչքի է ընկնում պարարտ հողերով, ընդարձակ արտերով, արօտավայրերով և ուռենիների ու բարդիների տնկարաններով։ Գիւղի միջից անց է կենում մի փոքրիկ առու, որն ոլորապտոյտ հոսելով ոռոգում է նրա դաշտավայրերը, իսկ գիւղի մէջտեղ, մի բլրի վրայ փռուած է աղայի դալան, որին կից ընկած է մի գեղեցիկ պարտէզ, պճնազարդուած պտղատու ծառերով և այգիներով։

Գիւղի հիմք գցողները եկած են Հայաբնակ Աղնաւուլ գիւղից 33 տարի առաջ. պարապում են հողագործութեամբ և անասնապահութեամբ։ Հողի կէսը վանքապատկան է, գնել է Նոր—Զուղայի առաջնորդ Խաչատուր վարդապետը Բէնան-էլ-մօլքից և նուիրել Ազգ. Կենտրոնական դպրոցին, իսկ մնացեալ կէսը խանական է։ Գիւղացիները հողազուրկ են. նրանք մշակում են հողատէրերի և դպրոցի հողը և բերքի $^1/_3$ մասը տալիս են նրանց։ Վարում են արօրով և ցանում նոյն հացաբոյսերը։*

Գիւղն ունի մի եկեղեցի՝ Ս. Աստուածածին։ Դպրոց չունի, քանի տարի առաջ ունեցել է դպրոցանման մի բան, բայց այժմ փակ է։ Գիւղացիութեան մեծամասնութիւնը խոր տգիտութեան մէջ է գտնւում։

Հայ գիւղացիութեան պատկերն այստեղ էլ շատ մռայլ է։ Գիւղը գտնւում է Ֆարաջի լամուկների ազդեցութեան տակ, որոնք իրենց աւազակային բնազդներով դարձել են մի չարիք գիւղում տպրող դպրոցապատկան գիւղացիութեան համար և շնորհիւ այդ հանգամանքի, ամեն անգամ երբ առիթ է ներկայանում, ամենաանխիղճ ձևերով հարստահարում են խաղաղ աշխատաւոր գիւղացիութեան քրտինքով ձեռք բերած աշխատանքը։ Նրանք ամեն տարի վերցնում են նրանցից ինչ որ կարող են ձեռք բերել. նրանց արտերում արածացնել են տալիս իրենց ոչխարների հօտը։ Թէ

* Այս գիւղն երկար տարիներ վէճի նիւթ է եղել դպրոցի (կամ վանքի) և Ֆարաջի մէջ, որից անվերջ օգուտել են տեղական իշխանութիւնները, իսկ դպրոցը տուժել է նիւթապէս։